Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ դիմումի ձևաթուղթը ճիշտ կաշխատի միայն Adobe Reader ծրագրային փաթեթի 9-րդ և ավելի բարձր տարբերակներով (ներբեռնումը հնարավոր է www.adobe.com կայքից): Խնդրում ենք ձևաթղթի օրինակը պահպանել Ձեր համակարգչում մինչև Adobe Reader ծրագրի օգնությամբ այն լրացնելը, այնուհետև տպել այն և փոստով ուղարկել Դատարան:

ARM - 2022/2

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Դիմումի ձևաթուղթ

Դիմումի սույն ձևաթղթի մասին

Դիմումի սույն ձևաթուղթը պաշտոնական իրավական փաստաթուղթ է և կարող է ազդել Ձեր իրավունքների և պարտականությունների վրա: Խնդրում ենք հետևել «Ծանոթագրություն՝ դիմումի ձևաթուղթը լրացնելու մասին» ուղեցույցում նշված ցուցումներին: Համոզվեք, որ լրացրել եք Ձեր իրավիճակին առնչվող բոլոր բաժինները և ներկայացրեք բոլոր համապատասխան փաստաթղթերը:

Ուշադրությու՛ն. թերի լրացված դիմումի ձևաթուղթն ընդունման ենթակա չէ (տե՛ս Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածը): Մասնավորապես, Ձեր ուշադրությունը հրավիրվում է 47-րդ հոդվածի 2 րդ կետի «ա» ենթակետին, համաձայն որի՝ փաստերի, գանգատների և ընդունելիության պայմանների բավարարման վերաբերյալ տեղեկատվության հակիրճ շարադրանքը ՊԵՏՔ է պարտադիր լրացվի դիմումի ձևաթղթի համապատասխան բաժիններում: Դատարանը պետք է կարողանա որոշել դիմումի էությունն ու շրջանակները լրացված ձևաթղթի հիման վրա՝ առանց կցված որևէ այլ նյութերի անդրադառնալու:

Գծիկավոր կոդով պիտակները

Եթե Դուք ՄԻԵԴ-ից արդեն ստացել եք գծիկավոր կոդով պիտակներ, ապա խնդրում ենք ստորև փակցնել այդ պիտակներից մեկը:

Դիմումին տրված համարը

Եթե այս գանգատների առնչությամբ Դուք Դատարանից արդեն տեղեկացվել եք Ձեր դիմումին տրված համարի մասին, ապա խնդրում ենք ստորև նշել այն:

A. Դիմողը

A.1. Անհատ դիմող

Սույն բաժինը վերաբերում է միայն ֆիզիկական անձ հանդիսացող դիմողներին: Եթե դիմողը կազմակերպություն է, ապա խնդրում ենք անցնել A.2 բաժին:

1. Ազգանուն

Այվազյան

2. Անուն (հայրանուն)

Արթուր Մարտինի

3. Ծննդյան ամսաթիվ

05081968

օր.՝ 31/12/1960

օր ամիս տարի

4. Ծննդավայր

Հայաստան

5. Քաղաքացիություն

ՀՀ

6. Հասցե

ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 6, բն 12

7. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

+374 91 423213

8. Էլ. փոստ (եթե այդպիսին կա)

9. Սեռ

(●) արական ( ) իգական

A.2. Կազմակերպություն

Սույն բաժինը պետք է լրացվի միայն այն դեպքում, երբ դիմողը հանդիսանում է ընկերություն, ՀԿ, արհմիություն կամ այլ իրավաբանական անձ: Այս դեպքում խնդրում ենք լրացնել նաև D.1 բաժինը:

10. Անվանում

11. Գրանցման համար (եթե այդպիսին կա)

12. Գրանցման ամսաթիվ (եթե այդպիսին կա)

օր.՝ 27/09/2012

օր ամիս տարի

13. Գործունեության ոլորտ

14. Գրանցման հասցե

15. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

16. Էլ. փոստ

B. Պետությունը (պետությունները), որի (որոնց) դեմ ներկայացվում է դիմումը

17. Նշել այն պետության (պետությունների) անվան դիմաց, որի (որոնց) դեմ ներկայացվում է դիմումը:

- [ ] ALB - Ալբանիա
- [ ] AND - Անդորրա
- [x] ARM - Հայաստան
- [ ] AUT - Ավստրիա
- [ ] AZE - Ադրբեջան
- [ ] BEL - Բելգիա
- [ ] BGR - Բուլղարիա
- [ ] BIH - Բոսնիա և Հերցեգովինա
- [ ] CHE - Շվեյցարիա
- [ ] CYP - Կիպրոս
- [ ] CZE - Չեխիայի Հանրապետություն
- [ ] DEU - Գերմանի
- [ ] DNK - Դանիա
- [ ] ESP - Իսպանիա
- [ ] EST - Էստոնիա
- [ ] FIN - Ֆինլանդիա
- [ ] FRA - Ֆրանսիա
- [ ] GBR - Միացյալ Թագավորություն
- [ ] GEO - Վրաստան
- [ ] GRC - Հունաստան
- [ ] HRV - Խորվաթիա
- [ ] HUN - Հունաստան
- [ ] IRL - Իռլանդիա
- [ ] ISL - Իսլանդիա
- [ ] ITA - Իտալիա
- [ ] LIE - Լիխտենշտեյն
- [ ] LTU - Լիտվա
- [ ] LUX - Լյուքսեմբուրգ
- [ ] LVA - Մոնակո
- [ ] MCO - Մոնակո
- [ ] MDA - Մոլդովայի Հանրապետություն
- [ ] MKD - Հյուսիսային Մակեդոնիա
- [ ] MLT - Մալթա
- [ ] MNE - Մոնտենեգրո
- [ ] NLD - Նիդերլանդներ
- [ ] NOR - Նորվեգիա
- [ ] POL - Լեհաստան
- [ ] PRT - Պորտուգալիա
- [ ] ROU - Ռումինիա
- [ ] RUS - Ռուսաստանի Դաշնություն*
- [ ] SMR - Սան Մարինո
- [ ] SRB - Սերբիա
- [ ] SVK - Սլովակիայի Հանրապետություն
- [ ] SVN - Սլովենիա
- [ ] SWE - Շվեդիա
- [ ] TUR - Թուրքիա
- [ ] UKR - Ուկրաինա

* 2022 թ. սեպտեմբերի 16-ին Ռուսաստանի Դաշնությունը դադարեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային մասնակից լինելուց:

C. Անհատ դիմողի ներկայացուցիչը (ներկայացուցիչները)

Այս փուլում պարտադիր չէ, որ անհատ դիմողը ներկայացված լինի փաստաբանի կողմից: Եթե դիմողը ներկայացուցիչ չունի, ապա խնդրում ենք միանգամից անցնել E բաժին:

Անհատ դիմողի անունից Դատարան դիմող, սակայն փաստաբանի որակավորում չունեցող ներկայացուցիչը (օր.՝ դիմողի ազգականը, ընկերը կամ խնամակալը) պետք է լրացնի C.1 բաժինը, այնինչ փաստաբանի որակավորում ունեցող ներկայացուցիչը պետք է լրացնի C.2 բաժինը: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է անպայման լրացնել C.3 բաժինը:

C.1. Փաստաբանի որակավորում չունեցող ներկայացուցիչ

18. Կարգավիճակը/կապը/դիրքը

19. Ազգանուն

20. Անուն (հայրանուն)

21. Քաղաքացիություն

22. Հասցե

23. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

24. Ֆաքս

25. Էլ. փոստ

C.2. Փաստաբանի որակավորում ունեցող ներկայացուցիչ

26. Ազգանուն

Բաղդասարյան

27. Անուն (հայրանուն)

Հարություն Նորալույսի

28. Քաղաքացիություն

ՀՀ

29. Հասցե

ՀՀ, ք. Երևան, Հ/Ամտ Վ-3, տ. 106

30. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

(+374) 91 82 44 78, 93 144 282

31. Ֆաքս

32. Էլ. փոստ

harutyunbaghdasaryan.adv@gmail.com

C.3. Լիազորագիր

Դիմողը պետք է լիազորի իր ներկայացուցչին հանդես գալ իր անունից՝ ստորագրելով ներքոնշյալ 33-րդ կետում: Նշանակված

Սույնով լիազորում եմ վերոնշյալ անձին՝ ներկայացնելու իմ շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կոնվենցիայի ...ացված իմ դիմումի հիման վրա հարուցվ...

33. Դիմողի ստորագրությունը

34. Ամսաթիվը:

01042024

օր ամիս տարի

օր.՝ 27/09/2015

Սույնով ստանձնում եմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո ներկայացված դիմումի ...իմողի շահերը ներկայացնելու լի...

35. Ներկայացուցչի ստորագրությունը

36. Ամսաթիվը

02042024

օր ամիս տարի

օր.՝ 27/09/2015

37. Էլ. փոստի հասցե՝ eComms համակարգից օգտվելու համար (եթե ներկայացուցիչն արդեն օգտվում է eComms համակարգից, ապա հարկավոր է լրացնել eComms համակարգում արդեն գրանցված էլ. փոստի հասցեն)

Լրացնելով սույն բաժինը՝ Դուք հաստատում եք Ձեր համաձայնությունը eComms համակարգից օգտվելու համար:

D. Դիմումատու կազմակերպության ներկայացուցիչը (ներկայացուցիչները)

Եթե դիմողը կազմակերպություն է, ապա Դատարանում դրա շահերը պետք է ներկայացնի այն անձը, ով իրավասու է հանդես գալ տվյալ կազմակերպության անունից (օր.՝ համապատասխան լիազորություն ունեցող գործադիր տնօրենը կամ այլ պաշտոնատար անձ): Ներկայացուցչի տվյալները պետք է լրացվեն D.1 բաժնում:
Եթե ներկայացուցիչը կազմակերպության անունից դիմում ներկայացնելու համար փաստաբան է նշանակում, ապա հարկավոր է նաև լրացնել D.2 և D.3 բաժինները:

D.1. Կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչ

38. Կարգավիճակը/կապը/դիրքը (խնդրում ենք տրամադրել համապատասխան ապացույց)

39. Ազգանուն

40. Անուն (հայրանուն)

41. Քաղաքացիություն

42. Հասցե

43. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

44. Ֆաքս

45. Էլ. փոստ

D.2. Փաստաբանի որակավորում ունեցող ներկայացուցիչ

46. Ազգանուն

47. Անուն (հայրանուն)

48. Քաղաքացիություն

49. Հասցե

50. Հեռախոս (ներառյալ միջազգային կոդը)

51. Ֆաքս

52. Էլ. փոստ

D.3. Լիազորագիր

Դիմումատու կազմակերպության ներկայացուցիչը պետք է լիազորի իր կողմից նշանակված փաստաբանին հանդես գալ կազմակերպության անունից՝ ստորագրելով ներքոնշյալ 53-րդ կետում: Նշանակված փաստաբանն իր հերթին պետք է հաստատի

Սույնով լիազորում եմ վերոհիշյալ D.2 բաժնում նշված անձին՝ ներկայացնելու դիմումատու կազմակերպության շահերը Մարդու ...ի 34-րդ հոդվա... ...այացված դիմումի հիման վրա հարուցված ...

53. Կազմակերպության պաշտոնական ներկայացուցչի ստորագրությունը

54. Ամսաթիվը

օր. 27/09/2015

օր ամիս տարի

Սույնով ստանձնում եմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո ներկայացված դիմումի ... դիմումատու կազմակերպության ... ...ացնելու լիազորությունը:

55. Փաստաբանի ստորագրությունը

56. Ամսաթիվը

օր. 27/09/2015

օր ամիս տարի

57. Էլ. փոստի հասցե՝ eComms համակարգից օգտվելու համար (եթե ներկայացուցիչն արդեն օգտվում է eComms համակարգից, ապա հարկավոր է լրացնել eComms համակարգում արդեն գրացված էլ. փոստի հասցեն)

Լրացնելով սույն բաժինը՝ Դուք հաստատում եք Ձեր համաձայնությունը eComms համակարգից օգտվելու համար:

Դիմումի առարկան

Դիմումի ձևաթղթի այս մասում (E, F և G բաժիններում) պետք է շարադրել գործի փաստերի, գանգատների, ինչպես նաև Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման և չորսամսյա ժամկետի պահպանման պահանջների բավարարման վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը: Այս բաժինները դատարկ թողնելը կամ դրանցում պարզապես կից հավելվածներին հղումներ կատարելն անընդունելի է: Տե՛ս Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև «Դիմումի ներկայացումը Դատարան» և «Ծանոթագրություն՝ դիմումի ձևաթուղթը լրացնելու մասին» գործնական ուղեցույցները:

E. Փաստերի շարադրանքը

58.

- 14.04.2023թ. Կ. Եղնուկյանը, Ա. Այվազյանը, Գ. Սարուխանյանը և Հ. Բաղդասարյանը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 418, 419, 420 և 421-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների մասին հաղորդում են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, ինչի վերաբերյալ 06.05.2023թ. պատասխան են ստացել զինվորական ծառայության դեմ ուղղված ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության բաժնի պետ Ա. Մարտիրոսյանից, համաձայն որի հաղորդումն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳ վարչություն:
- 12.05.2023թ. փաստաբան Հ. Բաղդասարյանը պարզաբանում է պահանջել գլխավոր դատախազից, թե ի՞նչ կապ ուներ ուղարկված հաղորդումը 90152023 քրեական վարույթի հետ և ինչո՞ւ է այն ուղարկվել քննչական կոմիտե, երբ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 418-421-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները (ՀՀ քր.դատ.օր. 483 հոդ. 17-րդ մասի 4-րդ կետ):
- 08.06.2023թ. ստացվել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության դատախազ Վ. Դաշտոյանի 02.06.2023թ. թիվ 20.5/20.5/10102-2023 գրությունը, համաձայն որի վերոնշյալ հաղորդումն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչություն, քանի որ նույն օրը՝ 2023թ. ապրիլի 14-ին ՀՀ քր.օր. 550 հոդ. 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով այնտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:
- 13.06.2023թ. բողոքաբերները դիմում-բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, որում բողոքարկել են ՀՀ գլխավոր դատախազության անգործությունը, նշել, որ նա խախտել է մի շարք դատավարական նորմեր, և կրկին պահանջել իրականացնել քրեական հետապնդում՝ ՀՀ քր.օր. 418-421 հոդվածների հատկանիշներով:
- 04.07.2023թ ստացվել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնի դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Վ. Վարդանյանի 27.06.2023թ. «Բողոքը քննության առնելու մասին» որոշումը, որով դատախազը մերժել է բողոքը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:
- 15.07.2023թ. բողոքաբերները դատախազի որոշումը բողոքարկել են ՀՀ Երևանի քրեական դատարան:
- 05.08.2023թ. փաստաբան Հ. Բաղդասարյանը դիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահ Մնացական Մարտիրոսյանին՝ պարզելու, թե ինչո՞ւ է խախտվել քրեադատավարական օրենքի 302-րդ հոդվածը (նախատեսված ժամկետում չքննելը):
- 09.08.2023թ. ստացվել է 20.07.2023թ. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Կարեն Ֆարխոյանի որոշումը՝ թիվ ԵԿ1/0179/11/23 գործով «Մինչդատական ակտը վիճարկելու վարույթ հարուցելու մասին», և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին:
- 07.10.2023թ. ստացվել է 08.09.2023թ. թվագրված, բայց 05.10.23թ. ուղարկված ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 04 սեպտեմբերի 2023թ. «Բողոքը քննության առնելու մասին» որոշումը, որով դատարանը մերժել է դիմողի բողոքը:
- 16.10.2023թ. բողոքաբերները ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշումը բողոքարկել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:
- 20.11.2023թ. ստացվել է դատավոր Սևակ Համբարձումյանի նախագահությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2023թ. նոյեմբերի 6-ի որոշումը՝ թիվ ԵԴ1/0179/11/23 «Բողոքը քննության առնելու մասին» որոշման դեմ Արթուր Այվազյանի, Կարո Եղնուկյանի, Գագիկ Սարուխանյանի և Հարություն Բաղդասարյանի բողոքը և որոշվել է այն մերժել, ու առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2023թ. սեպտեմբերի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
- 01.12.2023թ. Կ. Եղնուկյանը, Ա. Այվազյանը, Գ. Սարուխանյանը և Հ. Բաղդասարյանսը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը բողոքարկել են ՀՀ վճռաբեկ դատարան:
- 19.12.2023թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ նախագահությամբ Հ. Ասատրյանի, մասնակցությամբ Ա. Պողոսյանի և Ս. Ավետիսյանի ՀՀ անունից որոշում է ընդունել «Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու» մասին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ չի տրվել առերևույթ սխալ, ինչպես նաև՝ այն, որ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ

Փաստերի շարադրանքը (շարունակություն)

59.
են ինչպես միջազգային պայմանագրերը, այնպես էլ ՀՀ Սահմանադրությունը և նյութական ու դատավարական իրավունքի մի շարք նորմեր: Որպես ՀՀ քաղաքացի, դիմողը (մյուս բողոքաբերների հետ) դատարանին հայտնել է, որ դավաճան-հողատու/ներ/ի կողմից պետության տարածքային ամբողջականության խախտումը, ինչպես նաև սահմանադրական կարգի տապալումը և/կամ իշխանության յուրացումը անմիջական ազդեցություն են ունենում ՀՀ գիտակից ու մտահոգ քաղաքացիների վրա, նսեմացնում են նրանց ազգային արժանապատվու-թյունը, իսկ մարդկային ու տարածքային կորուստները խորը և ծանր բարոյա-հոգեբանական ցնցումներ են առաջացնում:
Արցախյան 2-րդ պատերազմից ընդամենը 2 օր առաջ՝ 2020թ. սեպտեմբերի 25-ին, ելույթ ունենալով ՄԱԿ-ի ԳԱ 75-րդ նստաշրջանի քննարկումներում և մոտալուտ պատերազմի մասին տեղյակ լինելով հանդերձ, Հայաստանի դե-ֆակտո ղեկավարը չի օգտագործել այդ հրաշալի առիթը՝ պատերազմից խուսափելու կամ գոնե այն հետաձգելու առումով:
- Այն, որ պատերազմը նախատեսել ու ցանկացել են ՀՀ ղեկավարները, հայտարարել են հենց իրենք, ինչի վերաբերյալ որպես ապացույց ներկայացվում է սույն լինքը.https://www.youtube.com/watch?v=ajAk6I5t5vk:
-Այն, որ դիմումատուները նշել են, որ ՀՀ իշխանությունը ներկայացնող անձինք գործել են ու գործում են ի վնաս Հայաստանի Հանրապետության, հաստատվում ու ապացուցվում է նրանց քայլերով. Արցախի հայաթափու-թյունը չկանխելով կամ կանխելու նպատակով ՄԱԿ Անվտանգության խորհուրդ չդիմելով, ՀՀ տարածքները զիջելով, ՀՀ քաղաքացիներին վախի ու պատերազմի սպառնալիքի մեջ պահելով, բանակին ուշադրություն չդարձնելով, գերիների վերադարձի ուղղությամբ քայլեր չանելով ու, մշտապես, թշնամու պահանջները կատարելով: ՀՀ կառավարությունը չի պահպանում նույնիսկ իր կողմից առաջ քաշված Ալմա-աթայի հռչակագրի դրույթները, որտեղ նշված է.«Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում և հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը և համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը» և այդ ուղղությամբ քայլեր չի անում՝ ՀՀ տարածքային ամբողջականությունը պահպանելու համար: Բացի այդ, վերոգրյալ ակտում նշված է նաև, որ կողմերը հրաժարվում են ուժ կիրառելուց և վեճերը լուծում են խաղաղ ճանապարհով, մինչդեռ Ադրբեջանը թե 90-ական թվականներին, և թե 2020թ. խախտել է այդ պայմանը: Իսկ ՀՀ կառավարությունը, փոխանակ հենց այս ակտով Ադրբեջանին սաստելու ու միջազգային ատյաններ դիմելու՝ Ադրբեջանին ագրեսոր ճանաչելու առումով, ՀՀ քաղաքացիներին վախեցնում է, թե եթե Ոսկեպարը (Հայկ. ՍՍՀ տարածք) Ադրբեջանին չտանք, ապա այն նորից կհարձակվի մեզ վրա:
Այս և նման հակապետական ու հակաազգային քայլերը կանխելու համար դիմումատուները դիմել են ՀՀ գլխավոր դատախազին և խնդրել նախաձեռնել քրեական վարույթ ու հանցանք կատարած անձի/անձանց նկատմամբ հարուցել քրեական հետապնդում:
- Այն, որ դատախազությունը ընթացք չէր տալու դիմումատուների հաղորդումներին ու պահանջներին պարզ էր ի սկզբանե, քանի որ Աննա Վարդապետյանը մինչև ՀՀ գլխավոր դատախազ դառնալը (2022 թվականի հունիսի 29-ին) եղել է Հայաստանի վարչապետ Ն. Փաշինյանի օգնականը: Եւ ընդամենը 3 ամիս անց, 2022թ. սեպտեմբերին, երբ Ջերմուկում և Իշխանասարում Ադրբեջանը նոր դիրքեր գրավեց, դատախազությունը Հայաստանի տարածքային ամբողջականության խախտում «չտեսավ»:
- Այն, որ ՀՀ դատարաններն էլ դիմումատուների բողոքները մերժելու էին, նույնպես ակնհայտ էր: Դա երևում է հենց անզեն աչքով, քանի որ բողոքաբերները դատախազի որոշումը ՀՀ Երևանի քրեական դատարան բողո-քարկել են 15.07.2023թ., մինչդեռ դատարանը բողոքը մերժել է 04.09.2023թ.(40 օր անց), իսկ բողոքաբերներին այն ուղարկել է մեկ ամիս անց՝ 05.10.23թ.(դա երևում է ուղեկցող գրության վրա արված մակագրությամբ):
- Այն, որ դատարանների նկատմամբ կառավարությունն ունի անմիջական ազդեցություն, Եւրոպական դատարանին հայտնի է Ալվինա Գյուլումյանը և այլք ընդդեմ Հայաստանի գանգատ թիվ 25240/20 գործով, որտեղ նշված է, որ 2019 թվականի մայիսի 19-ին Հայաստանի վարչապետը խստորեն դատապարտեց դատարաններին և իր աջակիցների միջոցով շրջափակեց դատարանի շենքերը և կոչ արեց վերափոխել դատական համակարգը: Դրանից հետո նա իր համար անընդունելի դատավորներին համարեց «վնգստացող» ու սկսեց կամաց-կամաց ազատվել նրանցից: Այս պայմաններում խոսել անկախ դատական համակարգի մասին, ծիծաղելի է, ուստի ՀՀ դատարաններից իրավունքի պաշտպանության ակնկալում, առավել ևս, որ այդ իրավախախտը կառավարության գլուխն է, անհնար է: Եւրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝դատարանի մատչելիության իրավունքն ար-դար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Եւ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրա-վունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն

Փաստերի շարադրանքը (շարունակություն)

60.
փակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս, օրինակ, Khalfaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետեր 35, 36, Papon v. France գործով Եւրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90): Ըստ Եւրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Եւրոպա-կան դատարանն իր որոշումներում արտահայտել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ Եւրոպական կոնվեն-ցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե նման դատարաններ գոյություն ունեն, ապա 6-րդ հոդվածի երաշխիքները պետք է տրամադրվեն (տե՛ս, օրինակ, Staroszczyk v. Poland գործով Եւրոպական դատարանի 22.03.2007 թվականի վճիռը, կետ 125): Սպարտակ Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝Եւրոպական դատարանի (թիվ 35688/11, 45 կետ) 24.11.2016թ. վճռով դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված երաշխիքները հանդիսանում են այդ դրույթի 1-ին կետով սահմանված արդար լսումների իրավունքի հատուկ հայեցակետերը (տե՛ս Ալ-Խավաջան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC]] գործը, թիվ 26766/05 և թիվ 22228/06, § 118, ՄԻԵԴ 2011): Ուստի Դատարանը կքննի դիմումատուի գանգատը՝ միասին վերցրած երկու դրույթների համաձայն (տե՛ս Վինդիշն ընդդեմ Ավստրիայի [Windisch v. Austria], 1990 թվականի սեպտեմբերի 27, § 23): Բողոքը քննած դատախազ Վ. Վարդանյանի 27.06.2023թ.որոշման մեջ նույնպես առկա են Եւրոպական դա-տարանի դիրքորոշումներն այն մասին, որ արդյունավետ քննություն իրականացնելու համար իշխանություն-ները պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր ողջամիտ միջոցները՝ տվյալ դեպքի վերաբերյալ ապացույցներն ապահովելու համար: … Քննության համար ակնհայտորեն անհրաժեշտ միջոցները պատշաճորեն չձեռնար-կելը վճռորոշ կերպով խոչընդոտում է գործի փաստական հանգամանքները պարզելու և մեղավորներին ի հայտ բերելու քննության հնարավորությունը (Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների, թիվ 52391/99 կետ 175): Այդուհանդերձ, դատախազը գտել է, որ նույն օրը՝ 2023թ. ապրիլի 14-ին ՀՀ քր.օր. 550 հոդ. 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով արդեն նախաձեռնվել է քրեական վարույթ, ուրեմն ՀՀ քր.օր. 418-421 հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար առանձին վարույթ կրկին անգամ չպետք է նախաձեռնել: Նույն կերպ վարվել է նաև առաջին ատյանի դատարանը, որն իր 04.09.2023թ. որոշման 16-րդ էջում նշում է, որ նոր վարույթ չնախաձեռնելն իրավաչափ է: Դատարանը հաստատել է նաև, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու համար տվյալ դեպքի վերաբերյալ ապացույցները: Դատարանը նման հետևության հանգել է դատախազ Վ. Վարդանյանի դիրքորոշումից (8-րդ էջ), մինչդեռ չի պարզել, թե բողոքաբերի ներկայացրած հիմքերով ի՞նչ ապացույցներ են ձեռք բերվել և ինչո՞ւ հաղորդում ներկայացրած անձինք չեն հարցաքննվել: Ի դեպ, ցայսօր պարզ չէ, թե ՀՀ պետական սահմանի խախտման համար ո՞վ է մեղավոր: Դա է պատճառը, որ ՀՀ վարչապետը նոր տարածքներ է պատրաստվում հանձնել: Միաժամանակ դատարանը գտել է, որ հանրային մասնակցի վրա քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննություն իրականացնելու պարտականություն դնելը դուրս է դատարանի լիազորությունից: ՀՀ քր.դատ. օր. 304-րդ 3-րդ մասի համաձայն. Բողոքը բավարարելու դեպքում դատարանը վարույթի հանրային մասնակցի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարութային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն: Եթե դատարանը գտել է, որ կոնկրետ վարութային ակտեր չեն կարող լինել քրեական վարույթ նախաձեռնելու կամ վարույթի ենթակայությունը փոխելու որոշումները, ուրեմն քրեադատավարական օրենքը չունի բավարար որոշակիություն՝ դատարանի լիազորությունների առումով: Ոչ առաջին ատյանի, դատարանը, ոչ էլ վերաքննիչ դատարանը գործը բանավոր ընթացակարգով չքննեցին և հնա-րավորություն չտվեցին դիմողին (բողոքաբերներին) դատավարության հանրային մասնակցից տեղեկանալու, թե ի՞նչ ընթացք է ստացել իրենց հաղորդումը: Այսինքն՝ դատարանները վախեցել են հանրային հնչեղությունից: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մեջբերելով Եւրոպական դատարանի նախադեպերը, նշում է, որ դատարանի որոշումը չի կարող մեկնաբանվել որպես դատարանի կողմից յուրաքանչյուր փաստարկին պատասխան տալու պահանջ (էջ 21), սակայն այդպես էլ չի անդրադարձել դատավարական ժամկետներն ու քննչական ենթակայությունը խախտված լինելու հանգամանքին և, ընդհանրապես, ուշադրություն չի դարձրել բողոքում բարձրացված բազում հարցերի: Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ չի տրվել առերևույթ սխալ: Ավելին, վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական դավաճանության կամ սահմանադրական կարգը տապալելու հանցագործությունների, իսկ ըստ էության՝ պատերազմ հրահրելու մասին

F. Կոնվենցիայի և/կամ Արձանագրությունների ենթադրյալ խախտումը (խախտումները) և համապատասխան փաստարկները

61. Հոդվածը, որի վրա հիմնվում եք	Պարզաբանում
ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:
Հոդված 6. Արդար դատաքննության իրավունք	Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:
Հոդված 13. Իրավական պաշտպանության արդյուն-ավետ միջոցի իրավունք	Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:
Հոդված 17. Իրավունքների չարաշահման արգելում	
Հոդված 34. Անհատական գանգատները	Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:
Հոդված 35. Ընդունելիության պայմանները	1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ	1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները	
Հոդված 23. Մարդու արժանապատվությունը	Մարդու արժանապատվությունն անխախտելի է:
Հոդված 6. Օրինականության սկզբունքը	1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը	1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանա-գրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:
Հոդված 79. Որոշակիության սկզբունքը	Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:
Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական	1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրու-թյունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաս-տանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ

Կոնվենցիայի և/կամ Արձանագրությունների ենթադրյալ խախտումը (խախտումները) և համապատասխան փաստարկները (շարունակություն)

62. Հոդվածը, որի վրա հիմնվում եք	Պարզաբանում
Հոդված 171. Վճռաբեկ դատարանը	1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է: 2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:
Հոդված 176. Դատախազությունը	1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: 2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կար-գով՝ 1) հարուցում է քրեական հետապնդում, 2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:
ՀՀ քրեական դատավարու-թյան օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ և	Դատախազն այն պետական պաշտոնատար անձն է, որը քրեական վարույթի ընթացքում պետության անունից իրականացնում է դատախազության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված լիազորությունները:
49-րդ կետեր	Դատախազը հարուցում է քրեական հետապնդում, հանձնարարություն է տալիս հսկող դատախազին՝ պարզելու որոշակի հանգամանքներ, կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:
ՀՀ քր.դատ.օր. 181 հոդ. 8-րդ մաս	Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար:
ՀՀ քր.դատ.օր. 483 հոդ. 16-րդ մասի 16-րդ կետ.	16) բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է պատշաճ, համակողմանի և անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար:
ՀՀ քր.դատ.օր. 304-րդ հոդ.3-րդ մաս	Բողոքը բավարարելու դեպքում դատարանը վարույթի հանրային մասնակցի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարութային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն:
ՀՀ քր.դատ.օր. 264 հոդ. 1-ին և 5-րդ մասեր	1. Դատական վարույթն իրականացվում է բանավոր, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ գրավոր ընթացակարգով: 5. Դատարանը սեփական նախաձեռնությամբ իրավասու է սույն հոդվածի 3-րդ մասում նշված վարույթներն իրականացնելու բանավոր ընթացակարգով կամ գրավոր ընթացակարգով իրականացվող վարույթն իր որոշմամբ փոխակեր-պելու բանավոր ընթացակարգով վարույթի, որի մասին սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցում է վարույթի վերաբերելի մասնակիցներին:
ՀՀ քր.դատ.օր. 299 հոդ. 1-ին մաս, 2-րդ կետ	1. Դատական բողոքարկման ենթակա են հետևյալ մինչդատական ակտերը. 2) ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումն արձանագրելուց կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը.

Ուշադրություն՝. այստեղ լրացվող տեղեկատվության շարադրանքը չպետք է գերազանցի հատկացված բաժնի սահմանները:

G. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ընդունելիության պայմանները բավարարելու վերաբերյալ տեղեկատվությունը

Յուրաքանչյուր գանգատի համար խնդրում ենք հավաստել, որ սպառել եք տվյալ պետությունում առկա իրավական պաշտպանության բոլոր արդյունավետ միջոցները՝ ներառյալ որոշումների բողոքարկումները, ինչպես նաև նշել տվյալ գանգատով ներպետական մակարդակում վերջնական որոշման ընդունման և հանձնման ամսաթիվը, որպեսզի ապացուցեք, որ պահպանել եք դիմում ներկայացնելու համար սահմանված չ

63. Գանգատը	Տեղեկատվություն՝ սպառած իրավական պաշտպանության միջոցների մասին, և վերջնական որոշման ամսաթիվը
Ճանաչել Մարդու իրավունք-ների և հիմնարար ազատու-թյունների պաշտպանության մասին ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6, 13 և 17 հոդվածների խախտում	ՀՀ վճռաբեկ դատարան քրեական պալատը վերջնական որոշումս այս գործով կայացրել է 19.12.2023թ.: Այսինքն՝ պահպանվել է դիմում ներկայացնելու համար սահմանված չորսամսյա ժամկետը:

Ուշադրությու՛ն. այստեղ լրացվող տեղեկատվության շարադրանքը չպետք է գերազանցի հատկացված բաժնի սահմանները:

64. Արդյոք գոյություն ունի՞ կամ ունեցե՞լ է բողոքարկման կամ իրավական պաշտպանության որևէ այլ հասանելի միջոց, որից Դուք չեք օգտվել

○ Այո
◉ Ոչ

65. Եթե վերոնշյալ հարցին տվել եք դրական պատասխան, ապա խնդրում ենք նշել բողոքարկման կամ իրավական պաշտպանության այն միջոցը, որից Դուք չեք օգտվել, և բացատրել դրանից չօգտվելու պատճառները

H. Տեղեկատվություն՝ այլ միջազգային ատյաններում տվյալ գործի քննության մասին (եթե այդպիսին կա կամ եղել է)

66. Սույն դիմումում ներկայացված գանգատներից որևէ մեկի քննության կամ կարգավորման նպատակով արդեն դիմե՞լ եք միջազգային որևէ այլ ատյան

○ Այո
◉ Ոչ

67. Եթե վերոնշյալ հարցին տվել եք դրական պատասխան, ապա խնդրում ենք ներկայացնել տվյալ ընթացակարգի հակիրճ շարադրանքը (ներկայացված գանգատները, միջազգային հաստատության անվանումը, ինչպես նաև տվյալ հայցով ընդունված որոշման բնույթն ու ամսաթիվը)

68. Արդյոք Դուք (դիմողը) Դատարանում ունե՞ք որևէ այլ գործ, որն այժմ քննվում է կամ նախկինում քննվել է Դատարանի կողմից

◉ Այո
○ Ոչ

69. Եթե վերոնշյալ հարցին տվել եք դրական պատասխան, ապա ստորև նշեք համապատասխան դիմում(ներ)ի համար(ներ)ը

ՄԱԹԵՎՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ (Գանգատ թիվ 52316/09) ՎՃԻՌ 14 սեպտեմբերի 2017թ.

I. Կցվող փաստաթղթերի ցանկը

Դուք պետք է կցեք բոլոր փաստաթղթերի ամբողջական և ընթեռնելի պատճենները : Ներկայացված փաստաթղթերը Ձեզ չեն վերադարձվելու: Հետևաբար, Ձեր իսկ շահերից ելնելով՝ բնօրինակների փոխարեն ուղարկեք վերջիններիս պատճենները: ՀԱՐԿԱՎՈՐ Է՝

- փաստաթղթերը դասավորել ըստ ամսաթվերի և վարույթների հաջորդականության,
- էջերը հաջորդաբար համարակալել,
- փաստաթղթերն իրար որևէ կերպ ՉԱՄՐԱՑՆԵԼ, ՉՍՈՍՆՁԵԼ կամ ՉԿԱՐԵԼ:

70. Ստորև նշեք կցվող փաստաթղթերի ցանկն՝ ըստ ժամանակագրական հերթականության, և տվեք դրանց հակիրճ նկարագրությունը: Նշեք յուրաքանչյուր փաստաթղթին համապատասխանող էջի համարը

1.	14.04.2023թ. հաղորդում հանցագործության մասին,		1-2
	28.04.2023թ. դատախազի ուղեկցող գրությունը:	էջ.	3
2.	12.05.2023թ.՝ դիմում գլխ. դատախազին, ուր նշված է հաղորդում ներկայացնելու մասին:	էջ.	4
3.		էջ.	
4.	02.06.2023թ. դատախազի պատասխան գրությունը:	էջ.	5
5.		էջ.	
6.	12.06.2023թ. բողոք գլխավոր դատախազին:	էջ.	6-8
7.		էջ.	
8.	27.06.2023թ. որոշում բողոքը քննության առնելու մասին:	էջ.	9-10
9.		էջ.	
10.	15.07.2023թ. բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի քրեական դատարան:	էջ.	11-19
11.		էջ.	
12.	05.08.2023թ. դիմում դատարանի նախագահին:	էջ.	20
13.		էջ.	
14.	09.08.2023թ. թիվ ԵԴ1/0179/11/23 գործով որոշումը (որոշման մեջ նշված թիվ 13206918 քր. գործի	էջ.	21
15.	վարույթը կարճելու որոշումը կապ չունի սույն գործի հետ):	էջ.	
16.	17.08.2023թ. քրեական դատարանի աշխատակազմի գրությունը:	էջ.	22
17.		էջ.	
18.	04.09.2023թ. Երևան քաղաքի առաջին ատյանի քրեական դատարանի որոշումը:	էջ.	23-31
19.		էջ.	
20.	16.10.2023թ. վերաքննիչ բողոք:	էջ.	32-38
21.		էջ.	
22.	06.09.2023թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը:	էջ.	39-49
23.		էջ.	
24.	01.12.2023թ. վճռաբեկ բողոք:	էջ.	50-54
25.		էջ.	
	19.12.2023թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումը:	էջ.	55-56
		էջ.	
	Դիմողի և փաստաբանի նույնականացման քարտերի պատճենները:	էջ.	57
	https://www.youtube.com/watch?v=ajAk6I5t5vk		

Այլ նշումներ

Ձեր դիմումի կապակցությամբ արդյոք ունե՞ք այլ նշումներ:

71. Նշումներ

Սույն գործով իր անունից դիմում է ներկայացրել նաև Հարություն Բաղդասարյանը

Հայտարարություն և ստորագրություն

Ամենայն համոզվածությամբ և գիտակցաբար հայտարարում եմ, որ սույն դիմումի ձևաթղթում ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ է:

72. Ամսաթիվը

02042024

օր ամիս տարի

օր՝ 27/09/2015

Դիմող(ներ)ը կամ ներկայացուցիչ(ներ)ը պետք է ստորագրի(ստորագրեն) ստորև:

73. Ստորագրություն(ներ)՝ (•) դիմող(ներ)ի ( ) ներկայացուցիչ(ներ)ի – նշել համապատասխան տարբերակը

Հետադարձ կապը

Եթե սույն դիմումը ներկայացվում է մեկից ավել դիմողների կամ ներկայացուցիչների կողմից, ապա խնդրում ենք նշել նրանցից միայն մեկի անունը և հասցեն, ում հետ էլ Դատարանը վարելու է իր հետագա նամակագրությունը: Եթե դիմողը ներկայացուցիչ ունի, ապա Դատարանն իր նամակագրությունը վարելու է միայն տվյալ ներկայացուցչի հետ (անկախ նրանից՝ արդյոք ներկայացուցիչը փաստաբան է, թե՝ ոչ):

74. Անունը և հասցեն՝ ( ) դիմողի (•) ներկայացուցչի – նշել համապատասխան տարբերակը

Հարություն Բաղդասարյան ք. Երևան, Հս/Ամտ Վ-3, տ 106
Harutyun Baghdasaryan, Yerevan, Nord-Ost V-3, h. 106

Դիմումի լրացված ձևաթուղթը պետք է ստորագրել և ուղարկել հետևյալ փոստային հասցեով.

The Registrar
European Court of Human Rights
Council of Europe
67075 STRASBOURG CEDEX
FRANCE